«ՎՆԱՍԵԼՈՎ ԿԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՎ»

բողջ շատ լուրջ նրբերանգները: Թեկուզ միայն դա բավական է, որպեսզի այդ գործը շարունակի Սերժ Սարգսյանը:

- Ինչ տրամադրություն կա ակադեմիայում Ազատության հրապարակում կատարվողի վերաբերյալ:

- Ակադեմիայում կա մեկ տրամադրություն. բոլոր ժամանակներում ակադեմիան մեր պետականությանը միշտ նվիրված կառույց է եղել եւ նպաստել է մեր երկրի զարգացմանը: Այսօր էլ ակադեմիայի ժողովուրդը ցանկանում է կայունություն լինի, ցանկանում է, որ մեր ժողովրդի տարբեր հատվածներ միմյանց դեմ չելնեն: Մանավանդ այն դեպքում, երբ հաղթողն արդեն ձեռք է մեկնել, խոսում է կոալիցիոն կառավարություն կազմելու մասին, այսինքն՝ առաջարկում է գործնական խոսակցություն ծավալել:

- Արտաքին գործերի, առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունների որոշ աշխատակիցներ միացան ՀՀ առաջին նախագահին, իսկ ինչպիսին է վիճակն ակադեմիայում: ԳԱԱ-ի աշխատակիցներից կա՞ն նման քայլի դիմողներ:

- Ես չգիտեմ ակադեմիայի համակարգից որեւէ մարդու, ճանաչված անձնավորության, որը նման քայլի է դիմել: Եթե լիներ, ես կիմանայի:

- Երկար տարիներ եղել եք Երեւանի պետական համալսարանի ռեկտորը, ուստի լավ գիտեք բուհական, համալսարանական կյանքը: Ինչ կարծիքի եք հանրահավաքի հարթակից թե՛ Լեւոն Տեր-Պետրոսյանի, թե՛ պահպանողական կուսակցության նախագահ Միքայել Հայրապետյանի՝ ուսանողությանն ուղղված դասադուլի կոչերի մասին: Օրինակ, ԱԺ պատգամավոր Էդուարդ Շարմազանովն ասում է, որ 1996 թվականի դասադուլներն ինքնաբուխ են եղել:

- Ես կարող եմ մի բան ասել, որ նախանցյալ օրը Երեւանի պետական համալսարանում առաջին չորս ժամերին դասախոսություն եմ կարդացել, եւ ուսանողների առնվազն 80 տոկոսը ներկա է եղել: Իսկ դա սովորական հաճախելիություն է: Եթե մենք ասենք, որ ուսանողության մեջ մարդիկ չկան, որ համակրում են որեւէ մեկին, սխալ է: Երիտասարդներ են, գուցե մեկի ծնողն է այնտեղ (Ազատության հրապարակում- Ռ.Թ.), մեկի՝ եղբայրը, մյուսի՝ այլ հարազատը, բայց նրանք ուսանողության քիչ մասն են կազմում: Այն ժամանակ էլ (1996-ին) կային կազմակերպիչներ, ոմանք էլ, իհարկե, ինքնաբուխ էին մասնակցում հանրահավաքներին, բայց դա շատ կարճ էր տեւում, եւ կարծում եմ՝ հիմա էլ նույնը կլինի: Ի դեպ, հանրահավաքի մասնակիցներն էլ ասում են, որ երիտասարդության թիվն օրեցօր պակասում է: Իհարկե, բուհերում պետք է որոշակի բացատրական աշխատանք տարվի, որովհետեւ այս սերունդը չգիտի անցած տարիների դժվարությունների, անարդարությունների մասին, եւ ուսանողները կարող են գայթակղվել:

- Հաճախ բուհերում ուսխորհրդի նախագահ, անդամ ավելի շատ դառնում են այն ուսանողները, ովքեր պատեհապաշտ են, քծնող, կարիերիստ: Լավ կլինի բուհերում ոչ թե դրանց տեղ տալ, այլ ավելի արժանիներին, ովքեր, գուցե ավելի համեստ են, բայց ինքնուրույն մտածելակերպ ունեն, քծնել չեն սիրում:

- Իհարկե, նման բան որոշ չափով նկատվում է, բայց հաճախ Ձեր նշած ուսանողներն ապաքաղաքականացված են, եւ նրանց ավելի շատ հետաքրքրում է ուսումը:

Ռ. ԹԱԹՈՅԱՆ